



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.1(47)

2-22

10 7 FEB 2010

ԱՍՖԻՉ
ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԻՃԱԿԻ
= ՅԵՎ =
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

338.147
2-22

ԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԹԵՐԵՎԱՆ—1931 Ք.

18 SEP 2013

30/90

338.1(47)

2-22 ամ

ԱՍԳԻՅ ԿՈՆՏԵՆՏՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀամԿ(բ)Կ Անգրյերկամի 1931 թ. փետրվարի 4-ի վարձուումը)

1. Լարված պայքարի շնորհիվ կուսակցությունը Ֆեոք բերեց համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող խոշորագույն հաղթանակներ և մեծագույն նվաճումներ արդյունաբերության վերակառուցման ասպարիզում, վճռական հաջողություններ դյուքստանահսության սոցիալիստական վերակառուցման ընթացավառում:

Կոլտնտեսական շինարարության ասպարիզում կուսակցության ձեռք բերած հաջողություններն անտարակույս բացարձակապես ընդգծում են խոշոր սոցիալիստական տնտեսության առավելությունները դյուլայցիական անհատական մանր տնտեսության նկատմամբ: Հրեղամյակի առաջին յերկու տարում կուսակցության ձեռք բերած մեծագույն նվաճումները հաստատում են կոլեկտիվացման մեր ընդունած տեժպի անպայման իրական վիճակը:

Այս տարի մենք ԽՍՀՄ-ի հանրախացված հատվածում ունենք 48,2 միլիոն հեկտար հացաբույսերի ցանք, զոր համարյա 5 անգամ գերազանցում է կուլակների 1927 թվ. ցանքերից (10 միլիոն հեկտար):

2. Վճռական պայքար մղելով «ձախ» սխալների և կուսակցության գծի այն խեղաթյուրումների դեմ, վորոնք կատարվել էին Անդրկովկասում կոլեկտիվացման առաջին շրջանում, վճռական պայքար մղելով ավյալ

ՊԵՏՐՈՍԻ ՅՊԱՐԱԸ
ՀՐԱՏ. № 1563
ՊԱՏՎԵՐ № 1534
ԳՐԱՌԵՊԳԼԵՎԱՐ 6300 (Բ)
ՅԵՐԱԺ 3000

1008
36430

եապիլի գլխավոր վտանգ աջ թեքման դեմ. ջախջախիչ
հարված հասցնելով կուլակին— անդրկովկասյան կու-
սակցական կազմակերպությունները կարողացան չքա-
վոր և միջակ անհատ տնտեսությունների նոր հոսանք
ստեղծել դեպի կոլտնտեսությունները:

3. Գրա հետ միասին Համկոմկուսի Սնդրյերկոմը
նշում է մի շարք ամենալուրջ թերություններ կոլաբ-
տեսությունների կազմակերպման և զարգացման առ-
աջարկելով, վորոնց պատճառը հիմնականում այն է,
վոր կուսակցության գծի «ձախ» խեղաթյուրումներից
հետո, վորոնք եյին՝ հիմնականում կամավորության
ընկնյան սկզբունքի խախտումը, վարչական հար-
կադրումը միջակների նկատմամբ, կոլեկտիվացման
ատորին ձևերից բարձր ձևվերին թռչելը, միջակի ան-
տեսումը և այլն—տեղերի կուսակցական կազմակեր-
պությունները վտաք դրին այդ սխալները աջ-ուսուր-
տունիստական պրակտիկայով ուղղելու ճանապարհը,
իրենց աշխատանքի հիմնական մեթոդը դարձնելով «ինք-
նահոսք», վոր նշանակում է հրաժարվել կոլտնտեսական
վերելքն իրոք կազմակերպելուց, պատրվակ բռնելով
կոլտնտեսական շարժման կամավորությունը: Կոլտը-
տեսությունների զարգացման և ամրացման գործում
գոյություն ունեցող աջ-ուսուրտունիստական պրակ-
տիկան ունեցավ այն հետևանքը, վոր մի շարք շրջան-
ներում կոլտնտեսությունները դեռ չեն ձևակերպվել
չկա աշխատանքի ճիշտ կազմակերպում, չեն արժատա-
ցել աշխատանքի սոցիալիստական նոր ձևվերը (հար-
վածայնություն, սոցմրցում, բրիգադներ և այլն),
չկան արտադրական խորհրդակցություններ, բոլորովին
չի կազմակերպված աշխատանքը չքավորության մեջ,
յեկամուսները բաշխվում են բոտ շնչի և վոր թե կու-

տնտեսականի աշխատանքի վորակի ու քանակի համա-
ձայն:

4. Տեղերի կուսակցական, խորհրդային և կոլտը-
տեսական կոուպերատիվ կազմակերպությունների աշ-
խատանքում խոչոր թերություն է այն, վոր նրանք չեն
կարողանում տնտեսական—քաղաքական կարևորագույն
կամպանիաները կապել գյուղում կուսակցության կե-
քառած ձեռնարկումների, դեպի կոլտնտեսությունները
նոր ալիք կազմակերպելու խնդիրների հետ: Գարնան
գյուղատնտեսական կամպանիան, ներառյալ նաև բաժ-
նակի հավաքման կամպանիան, հացամթերումները,
աշնանավարը, նոր մեքենա—տրակտորային կայանների
կազմակերպումը և մի շարք այլ կարեկորագույն
գյուղատնտեսական ձեռնարկումներ, շատ վայրերում
հարված են յեղել գոյություն ունեցող կոլտնտեսու-
թյունների ամրացման ու աճման և կոլտնտեսական
նոր հոսանքի կազմակերպման խնդիրներից: Միմիայն
փնտակամ պայքար մղելով այդ աջ-ուսուրտունիստա-
կան փորձերի դեմ, տեղի կուսակցական, խորհրդային
և կոլտնտեսական—կոուպերատիվ կազմակերպություն-
ները կկարողանան բայշելիկորեն մախապատրաստել
և ամցկացնել գարնան ընթացիկ գյուղատնտեսական
կամպանիան, իրագործել գարնանացանի պլանը
ԱՍՖԽՆ-ի կոլտնտեսություններում, վոր կազմում է
291 հազար հեկտար, ներառյալ նաև բամբակի պլանը՝
115 հազար հեկտար, և այդպիսով կատարել Համկոմ-
կուսի կենտկոմի դեկտեմբերյան պլանումի դիրեկտիվը,
վորը պահանջում է 1931 թվականին կոլեկտիվացման
ընթացիկ տնտեսությունների առնվազն 50 տոկոսը
բամբակագործական շրջաններում և 20—25 տոկոսը՝
ամրագր ԱՍՖԽՆ-ում:

Բամբակագործական շրջաններում կոլտնտեսական

չինտաբարութեան ծավալումը՝ նրա մեքենա-տրակտորա-
յին կայանների կառուցման և արտադրութեան պրոցես-
ների մեքենայացումը տեղի յե ունենալու դասակար-
գության սուր պայքարի պայմաններում: Կուլակութեան
նր և նրա քաղաքական ներշնչողները՝ մուսավաթական-
ները, դաշնակներն ու մենչեվիկները, կատաղի պայքար
են ծավալում հացահատիկային մշակույթը տեխնիկա-
կան մշակույթներով փոխարինելու դեմ, բամբակի ցան-
քի ընդարձակման դեմ, Խորհրդային Հանրապետու-
թյունների Միութեան բամբակային անկախութեան
դեմ: Ուստի բամբակի համար մզվող պայքարը հան-
դիսանում է ազգային բուրժուազիայի, տեղական մա-
ցիանալիզմի դեմ մզվող պայքարի ձևերից մեկը: Այդ
իսկ պատճառով բամբակի և տեխնիկական այլ մշա-
կույթների (առաջին հերթին բեյի) պրոբլեմի հեշտ
լուծումը հանդիսանում է լեհիսյան ազգային քաղաքա-
կանության միջոց կիրառման կարեւորագույն լծակնե-
րից մեկը բազմազգի Անդրկովկասի պայմաններում:
Կուսակցության Յերկրային Կոմիտեն նշում է, վերջ
կաշտնտեսութեաններն անթույլատրելի դանդաղ տեմ-
պով են պատրաստվում զարնանագանի կամպանիային ք
մասնավանդ տեխնիկական մշակույթների շրջաններում:
Մինչեւ այժմ ել աշխատանքի մարտական տեմպ չեն
ուսացել զարնանագանի կամպանիայի պլանների մշա-
կումն ու ընարկումը, հանդիպական պլանների կտրը
մակերպումը, գյուղատնտեսական ինվենտարի նորո-
գումը, սերմացվի և ապահովագրական Փոնդերի հա-
վաքումը, մեքենա-տրակտորային նոր կայանների ծու-
գումը, պայմանագրական կամպանիայի կիրառումը
և ուրիշ:

ՄԱՐՏԱԿԱՆ ՏԵՄ ՇԱՂՈՐԳԵԼ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆԸ

Համկոմկուսի Անդրյերկոմն առաջարկում է կու-
սակցության կենտկոմներին, մարզկոմներին, շրջկոմ-
ներին, Անդրհողօղկոմատին, Անդրկոլտնտէնարոնին
և հանրապետութեանների հողօղկոմատներին, կոլ-
տնտէկնտրոններին ու Անդրարակտորկենտրոնին՝

ա) Միջոցներ ձեռք առնել, վոր կուսակցության և
կառավարութեան սահմանած ժամկետներին կենսա-
պրծվեն զարնանագանի այն բոլոր նախապատրաստա-
կան ձեռնակումները, վորոնց նպատակն է՝ ցանքի
պլանները հասցնել մինչև կոլտնտեսութեան, հավաքել
սեմացվի և ապահովագրական Փոնդերը, նորոգել կոլ-
տնտեսութեանների ինվենտարը, կայտարարելով փե-
տքրվարը նորոգման հարվածային ամիս, կազմակեր-
պելով և շրջաններն ուղարկելով նորոգող բանվորական
բրիգադներ:

բ) Կոլտնտեսութեաններում ու մեքենա-տրակտո-
րային կայաններում արտադրական պլանների ընար-
կումն ու ընդունումն ոգտագործել կոլտնտեսականե-
րի մեջ աշխատանքը ճիշտ բաշխելու, բրիգադիները
ընտրելու, բրիգադներ կազմակերպելու և պլաններն ու
առաջադրանքները ճիշտ վորոշելու համար:

գ) Վճռական պայքար մղել բերքն ու յեկամուտները
ըստ շնչի բաժանելու դեմ, սեխնա հարվածելով «պու-
կոտ ասարներին, գատարկապորտներին, առանց հանրա-
պետական աշխատանքին մասնակցելու» նրա արդյունքներից
ուղափել միջոցներին» (Համկոմկուսի Կենտկոմի վորո-
շյալից): Անշեղորեն իրականացնել Համկոմկուսի Կենտ-
կոմի գերեկախվը, վորով պահանջվում է, վոր «բոլոր
Փոլտնտեսութեաններն իրոք կենսագործեն բերքի բաշխ-

ման կանոնները՝ բացառապես կոլտնտեսականի և նրա ընտանիքի աշխատանքի քանակի ու մորակի համաձայն (Համկոմկուսի կենտկոմի վորոշումից) :

դ) Տեխնիկական մշակույթների շրջաններում վերանայել շրջկոլտնտնութժյունների նախագահների կազմը և թույլ աշխատողներին փոխարինել ընդունակ այնպիսի աշխատողներով, վորոնք կարող են բայլել վիկուրեն դիտավորել կոլտնտեսական շարժումը :

ե) 20 որվա ընթացքում ընտրել առնվազն 70 աշխատող և ուղարկել բամբակագործական շրջանները՝ կոլտնտեսութժյուններում աշխատելու համար (վորոշան շրջանային կոլտնտեսութժյունների հրահանգիչներ և բաժնի վարիչներ) . դրանցից Ադրբեջան ուղարկել 40 հոգի, վրաստան՝ 15 հոգի և Հայաստան՝ 15 հոգի :

զ) Տեխնիկական մշակույթների շրջաններում մտասայաբար պատրաստել կոլտնտեսական ակտիվ (բրեքադիրներ, աշխատանքի կազմավերպիչներ, ակտիվիստ կանայք, ազրոյիագործներ, սիրոսաշեններ և այլն)՝ առնրվազը 15 հազար հոգուց, վորոնցից Ադրբեջանում առնրվազն 10 հազար հոգի, վրաստանում 2500 հոգի և Հայաստանում՝ 2500 հոգի :

է) Միջոցներ ձեռք առնել, վոր տեղական կազմակերպութժյունները լիակատար ուշադրութժյուն նվիրեն «25.000-ի» աշխատանքին, սորացնելով նրանց կոլտնտեսական աշխատանքին, ապահովելով բնակարաններով, կարգավորելով աշխատավարժի հարցը և կոտնոնավոր կերպով արդյունաբերական ապրանք հայթայթելով նրան :

ը) Հողաշինարարական ուժերն ու միջոցները վերարաշխել այնպես, վոր լրիվ ապահովված լինեն նոր և առաջ տեխնիկական մշակույթների շրջաններում գտնվող կոլտնտեսութժյունների հողաշինարարական կարիքները :

Լրիվ իրագործել կառավարութժյան այն վորոշումը, վորը պահանջում է կոլտնտեսութժյուններին հատկացնել լավագույն և մերձակա հողերը, միացնելով վերջիններս և կազմելով մի հողարածին : կոլտնտեսութժյուններում հողաշինարարական աշխատանքներն ավարտել սմենաուշը մինչեվ մարտի 15-ը :

թ) Անդրկոլտնտկենտրոնին և հանրապետութժյուններ կոլտնտկենտրոններին առաջարկվում է կոլտնտեսութժյունների հաշվետու վերընտրական կամպանիայի ընթացքում ավարտել բոլոր կոլտնտեսութժյունների ձևակերպումն ըստ կանոնադրութժյունների և միջոցներ ձեռք առնել, վոր կազմվեն կանոնադրութժյամբ նախատեսված Ֆոնդերը :

Ն. Համկոմկուսի Անդրյերկումը կազմակերպութժյունների, մանավանդ վարկավորող որդանների ուշադրութժյունն է հրավիրում մի շարք շրջաններում կողդրութժյունն է հրավիրում մի շարք շրջաններում կոլկատարվում է առանց հաշվի առնելու բոլոր վարկերե ոգտագործման հնարավորութժյունը և նրանց արդյունավետութժյունը : Առաջարկել Պետքանկի Անդրկովկասյան բաժանմունքին և Անդրկոլտնտկենտրոնին՝ յերկու տասնորյակի ընթացքում՝

ա) Հայտարարել կոլտնտեսութժյունների իրական պարտքերը, ձեվակերպելով կոլտնտեսութժյուններից դուրս յեկամ անդամների, ինչպես և լուծված կոլտնտեսութժյունների պարտքերը :

բ) Մարտական տեմպ տալ կոլտնտեսութժյունների մորելիզացիային, կիրառելով հանդիպական պլանների մեթոդն ու սոցմրցումը :

7. Անհրաժեշտ է լայնորեն մասսայականացնել կոլտնտեսականների և չքավոր ու միջակ անհատ տրեստեսութժյան մեջ այն արտոնութժյունները, վոր տալիս է

կառավարութիւնն ու կուսակցութիւնը կորսնտեսու-
թիւններին և կորսնտեսականներին: Համկոմկուսի
Անդրբերկումն առաջարկում է կուսակցութեան կենսա-
րոններին, մարդկամներին ու շրջկոմներին և տեղերի
հողային ու կուտնտեսական որդաններին՝ միջոցներ
ձեռք առնել, վոր գյուղատնտեսական բոլոր արտերնե-
րը առանձնացնեն իրենց յեկամուտների 5 տոկոսը,
քննարկելով այդ հարցը կուտնտեսականներին և չքա-
վոր ու միջակ տնտեսութիւններին միացյալ ժողովնե-
րում և ոգտագործելով այն միջակին գյուղատնտեսա-
կան արտելի մեջ ներդրալելու համար:

8. Կուտնտեսութիւններում անընդհատ արւադրա-
կան տարլա համար մղվող պայքարը հզոր լծակ է
չքալորին և միջակին կուտնտեսութեան մեջ ներդրա-
վելու համար: Կազմակերպելով կուտնտեսականներին
համար մշտական դրսի աշխատանք, անհրաժեշտ է լալն
չափով կազմակերպել նաև ժամանակավոր դրսի աշխա-
տանք և ձմեռվա աշխատանք տեղերում: Առաջարկվում
է կուսակցութեան կենտկոմներին, մարդկոմներին ու
շրջկոմներին և կուտնտեսական-կոոպերատիվ կազմա-
կերպութիւններին կուտնտեսութիւններում դրսի և
ձմեռվա աշխատանք կազմակերպելու հարցերն առա-
ջադրել արտագրական խորհրդակցութիւններին, գյուղ-
խորհուրդներին պլենումներին, կուսակցութեան գյուղ-
բնիկներին և շրջկոմներին գործնական քննարկմանը:

9. Նշել, վոր մի շարք շրջաններում մինչեւ այժմ
էլ չի վերացել «հակալաւութիւնը»: Կիրառելով գո-
լութիւն ունեցող մանր տնտեսութիւններն ամբացնե-
լու պայմաններին նախապատրաստման գիծը, միլիվ-
նուլն ժամանակ անհրաժեշտ է վճարական պայքար
մղել մի շարք շրջանային կազմակերպութիւններին
«հակալաւութեան» դեմ: Առաջարկել վրաստանի Կոմ-
կուսի կենտկոմին և վրաստանի կուտնտեսանորոնին

ստուգել կուտնտեսական շարժման դրութիւնը Ո-
դարդեթի, Լանչխուսի, Ամբրուլուրի շրջաններում
նպատակ դնելով հայտարերել, թե վարքան ճիշտ են
կազմակերպած կուտնտեսութիւնները, իրակա-
նում ինչ չափով են կուտնտեսութեան գյուղացիութեան
արտագրական միջոցները և ցանքի հողերը:

10. Անդրբերկումը հատուկ պահանջ է ներկայաց-
նում կուսակցական և կուտնտեսական կազմակերպու-
թիւններին՝ ամբացնել գոլութիւնն ունեցող կոմունա-
ները, վորպես կուտնտեսական շարժման բարձրագույն
ձեւեր, վերածելով դրանք խոշոր սոցիալիստական
տնտեսութեան լալադուլն որինակներին, ամեն կերպ
արմատացնելով նրանց մեջ աշխատանքի կազմակերպ-
ման սոցիալիստական ձեւերը:

11. Յերկելով կուսակցութեան 16-րդ համագումար-
ին այն վորոշումից, վորն ասում է, թե «կուտնտեսա-
կան շարժման զարգացման տվյալ ստորիճանում կու-
տնտեսութեան հիմնական ձեւին է գյուղատնտեսական
արտելը», անհրաժեշտ է, վոր մի շեղում չկատարելով
կուտնտեսական շարժման կամավորութեան սկզբուն-
քից, լալն աշխատանք ծալալել գյուղացիներին մեջ,
կազմակերպելով գյուղատնտեսական արտերնե-
րին, վորպես կուտնտեսական հիմնական ձեւի, թերա-
պահատման դեմ: Դրա հետ միասին Անդրբերկումը
տեխնիկական ցածր մակարդակ ունեցող և չքալորնե-
րի ու բատրակներին թուլ կազմակերպված շրջաններին
կուտնտեսական կազմակերպութիւններին առաջ խնդիր է
դնում ուժեղացնել հողագտագործական բնակչութեան
կազմակերպութիւնը, վորպես արտելին անցնելու ձեւ:

12. Տնտեսապես հետամնաց շրջաններում կուտն-
տեսական շարժման մաստայական ծալալման պայման-
ները նախապատրաստելու սադարիլում գյուղատն-

տեսական կոոպերացիայի հիմնական խնդիրն է՝ ամենուրեք կազմակերպել ավանային ընկերություններ, վերածելով վերջիններս սպառողական-վաճառահանման կազմակերպություններից արտադրական միավորումների և վերափոխելով անհատական տնտեսությունները սոցիալիստական ձևով:

ԳԼԽԱՎՈՐԵԼ ՀԶՈՐ ՀՈՍԱՆՔԸ ԴԵՊԻ ԿՈՆՏԵՍՏ-ՍՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ

13. Գարնան գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստումը վճռական դեր է խաղում կոլեկտիվացման պլանի կատարման համար: Նշելով գարնան գյուղատնտեսական կամպանիայի բոլոր ձեռնարկումների թույլ ծավալումը առանձին կազմակերպություններում, այդ ձեռնարկումների կտրված լինելը կոլտնտեսական նոր վերելքի համար մղվող պայքարից, Անդրյերկոմն առաջարկում է անհապաղ բեկում ստեղծել կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական կազմակերպությունների ամբողջ խչրատանքում, լայնորեն մասսայականացնելով Համկոմկուսի Կենտկոմի և ՊՍՀՄ-ի Ժողկոմխորհի դիմումը՝ դարնանացանի կոնտրակտացիայի մասին, վորը մեծադույն ազդակ է կոլեկտիվացման գարգացման համար:

14. Անհրաժեշտ է գյուղում կազմակերպել և համախորհել մեր դասակարգային ուժերը՝ միջակի հետ կնքված դաշինքի հիման վրա կուլակոլթյան դեմ պայքարելու նպատակով: Մի շարք շրջաններում ինքնամփոփման անառողջ տենդենցը սաստկանում է վորոշ կոլտնտեսություններում, վորոնք ցույց են տալիս իրենց չբնապատող չբավոր և միջակ գյուղացիությունը հակադրելու ձգտումներ, փոխումակ նոր

ալիք ստեղծելու դեպի կոլտնտեսությունները և գլխավորելու այդ շարժումը:

Համկոմկուսի Անդրյերկոմն առանձնապես ընդգծում է, վոր մի շարք շրջաններում միջակը անթույլատրելի կերպով քիչ է ներգրավված կոլտնտեսությունների կազմակերպման ասպարեզ և առաջարկում է տեղական բոլոր կուսակցական կոմիտեներին ու կոլտնտեսական կազմակերպություններին ստուգել հաշվետու վերընտրական կամպանիայի արդյունքները, նպատակ դնելով «դեկավարությունը մասնակից դարձնել լավագույն միջակներին և հնարավորություն տալ նրանց ցուցաբերել իրենց ընդունակությունները» (Ի. ՍՍԱԼԻՆ), վճռաբար դուրս վտարելով կոլտնտեսությունների դեպի վար սրգաններից կուլակային և խորթ տարրերին:

15. Կոլտնտեսությունների մասսայական աշխատանքի նոր ձևվերը՝ արտադրական խորհրդակցություններ, նախաձեռնող խմբակներ, հարվածալին կոլտնտեսականների հավաքը, հարվածային բրիգադներ, կոլտնտեսությունների վարչությունները հաշվետվությունը անհատ տնտեսությունների առաջ, կոլտնտեսությունների աշխատանքին ծանոթացած անհատ տնտեսությունների հարակից զեկուցումները, կոլտնտեսությունների փոխադարձ ծանոթացումը և հետազոտումը, ինքնաքննադատություն և սոցիալիստական ժրջություն լայն ծավալումը, հարվածայինությունը, հանրային ոգնությունը, հանդիպական պլանը, չեֆությունը, դեռ համապատասխան չափով չեն կիրառվում մեր ստորին կոլտնտեսական ու կոոպերատիվ և գյուղական ու կուսակցական կազմակերպությունների գործնական աշխատանքում:

Անդրյերկոմն առաջարկում է կենսիցներին, մարդիցներին և շրջկոմներին միջոցներ ձեռք ստանել, վոր տեղերում կուսակցական, խորհրդային և կոլտնտես

ասկան կազմակերպութիւնները կիրառեն մասսայական աշխատանքի և դեպի կոլտնտեսութիւնները նոր հոսանք կազմակերպելու նոր մեթոդներն ու ձեւերը:

ՎԵՐՁ ԴՆԵԼ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՄԱՆ ՔԵՐԱԳՆԱԶՍՄԱՆԸ

16. Կոլեկտիվացման ասպարէզում ձեռք բերված հաջողութիւններն ամբողջելու և վերջիններս հետագա տաղանթացի միջոց դարձնելու հիմնական պայմաններից մեկն է՝ անպայման և յեռանդազին կատարել կուսակցութեան փորձումը չքափորներին կազմակերպելու մասին:

Միմիայն վճարար հաղթահարելով բարակներին ու գյուղի չքափորների մեջ կատարվող աշխատանքի թերազնահատումը և պատիվ վերաբերմունքը դեպի այդ աշխատանքները, միմիայն վճարար հաղթահարելով ամեն տեսակ թեքումները լենինյան գծից, մենք էրոզ կհարողանանք կազմակերպել մեր հենարանը գյուղում՝ բարակներին և չքափորներին:

Չքափորների և բարակների խմբակները նախ և առաջ պետք է կազմակերպված լինեն պրոլետարական դիկտատուրայի ուղղանների սխեմում՝ խորհուրդներում և կոոպերատիվ կազմակերպութիւններում: Երբանք պետք է հանդիսանան մշտապես գործող կազմակերպութիւններ, խորհուրդների ու կոոպերացիայի աշխատանքի բոլոր բնագավառները ղեկավարողներ և այդ աշխատանքին ակտիվ մասնակցողներ:

17. Մեծ նշանակութիւն է ստանում բարակների և չքափորների կազմակերպումը, վորպես մշտապես գործող խմբակներ ամենապարզ ձեւի կոլտնտեսութիւններում, վորոնց թվում նաև դեռ չամբողջված

գյուղատնտեսական արտերներում Այստեղ չքափորական և բարակային խմբակների աշխատանքը պետք է լինի՝ նախ և առաջ պայքար մղել կոլտնտեսական չարժման վերակի համար, նպատակ դնելով «վերափոխել գյուղացուն, կոլտնտեսականին, դուրս մղել նրանցից խզիվիդուարիստական հոգեբանութիւնը և դարձնել նրան սոցիալիստական հասարակութեան իսկական աշխատավոր» (Ի. ՄՏԱԼԻՆ):

Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել գյուղատնտեսական արտերների չքափորներին և բարակներին: Գյուղատնտեսական արտերներում չքափոր-բարակային կորիզի դերն է դառնալ առաջավոր կոլտնտեսականների կազմակերպութեան, վոր պետք է գլխավորի աշխատանքի ավելի քարճար արտադրողականութեան, նրա սոցիալիստական կազմակերպման, սոցմիքման և հարվածայնութեան համար մղվող պայքարը:

Ծավալելով թե կոլտնտեսութիւններում և թե գյուղում չքափորների խմբակի աշխատանքը, կուսակցական կազմակերպութիւնները պետք է այնպես կազմակերպեն չքափորական խմբակների աշխատանքը, վոր ներքանք վոչ միայն պաշտպանեն չքափորների անմիջական շահերը, այլև նպատեն բանվոր դասակարգի և գյուղի չքափորների ու միջակների դաշինքի ամբողջմանը» (16-րդ կուսամաստումարի բանաձեւից):

Անդրերկրումն ընդդում է, վոր անհրաժեշտ է չքափորների մեջ պատահական կամպանեական աշխատանք կատարելուց անցնել սիտեմատիկ և իրական դեկտրաման:

Գյուղի կուսաշխատանքի ծանրութեան կենտրոնը պետք է փոխադրել չքափորների և բարակների մեջ հրատարվող աշխատանքի վրա: Չպայքար մղելով կուսակցութեան գյուղի հենարանի ամբողջման համար, կուս-

կազմակերպութիւնները նախ և առաջ պետք է նվաճեն չքավորների խմբակները, դարձնելով չքավորների այդ կենտրոնական վճռական կազմակերպութիւնը, չքավորների և բարտրակների մեջ կատարվող մասսայական աշխատանքի ինստիտուտ, «ընդ վորում, այդ ամբողջ աշխատանքը պետք է նշանակի չքավորների և միջակներին այն դաշինքի հետադա ամբողջմանը, վորը կուսակցութեան ղեկավարութեամբ ուղղված է կուլակի դեմ» : (Հայկոմկուսի Կենտկոմի վորոշումից) :

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊԻՏԻ ՅԵՐԵՍՆԵՐԸ ԴԱՐՁՆԵՆ ԴԵՊԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Կուսակցական կազմակերպութիւնների անհետաճելի խնդիրն է՝ ավելի մեծ ուղղարութիւն նվիրել մասսայական կազմակերպութիւններին, խորհուրդների և արհմիութիւններին գործունեութեան բարելավմանը և դարձնել նրանց յերեսը ղեկպի կորտնտեսուկուն շինարարութիւնը :

Խորհուրդները, վորպես մասսայական կազմակերպութիւններ, մինչև արդէ ևլ հետո յեն մնում կուտնտեսական շարժման մի շարք կարեվորագույն հարցերից : Գյուղական խորհուրդները, մասսայաբար վերցրած, կուլեկտիվացման նախաձեռնողներ չեն հանդիսանում, չեն գլխավորում շարժումը, յենթադրելով, թէ ղեկ մինչև արդէ ևլ մենք պարում ենք «հեղափոխութեան յերեկվա որը» (Վ. Մոլոտով) :

Գոյութիւն ունեցող կորտնտեսութիւնների ամբողջման և նրանց հետագա աճման համար մղվող պայքարում, խորհուրդներն զգալի գեր պիտի կատարեն : Նրանք պետք է ոգնեն կորտնտեսութիւնների վարձաց-

մանը և նրանց ավելի բարձր աստիճանի փոխադրմանը : «Անհրաժեշտ է ուժեղացնել խորհուրդների ղեկավարութեանը, կուլեկտիվացման ասպարեղում և բարձրացնել խորհուրդների պատասխանատվութիւնը, կուտնտեսական շինարարութեան համար» (Համկոմկուսի Կենտկոմի վորոշումից) :

Կուլեկտիվացման պայմաններում գյուղխորհուրդների առաջ դրված խնդիրները պահանջում են բարելավել կուսակցութեան ղեկավարութիւնը խորհուրդների նկատմամբ և ամբողջել խորհուրդները, ավելի լավ ուղեկարգելու ընտրութիւն կատարելով կադրերի մեջ, կազմակերպելով և բարելավելով գյուղխորհուրդների չքավորական խմբակների աշխատանքը, գյուղխորհուրդների մասսայական ամբողջ աշխատանքի մեջ շրջադարձ ստեղծելով ղեկպի կորտնտեսութիւնները :

19. Մեր ձեռք բերած հաջողութիւններն ամբողջութեամբ և հետագա առաջընթացի համար պլանայափ ողջունողը նպատակով անհրաժեշտ է վորպես առաջնահերթ խնդիր առաջադրել գյուղի կուսակցական աշխատանքի վորակի բարձրացումը : Գյուղի բըջիցն իրոք պետք է գիտակցի, վոր նա պատասխանատու յեն կորտնտեսութեան, խորտնտեսութեան և մեքենատրակտորային կայանների տնտեսական վիճակի հաւաք, ինչպես արտադրական բըջը պատասխանատու յեն արդիւնալիւնների կատարման համար : Գյուղատնտեսութեան կուլեկտիվացման բարձր տողոս ունեցող շրջաններում գյուղական բըջը պետք է կառուցված լինի առավելապես արտադրական սկզբունքով (մեքենատրակտորային կայանի, խորտնտեսութեան կամ կորտնտեսութեան բըջը) : Գյուղական բըջն իր աշխատանքի ծանրութեան կենտրոնը պետք է փոխադրի օտորին արտադրական ողակը (հողամաս, օեկտոր, բըրդաղ և այլն) : Կուսկոմիտեները պետք է վերակազմեն

1008
36430

իրենց աշխատանքը և վճռաբար բարեկամին կենդանի
վեկախարությունն ու հրահանգչական գործը, ավելի
մեծ ոգնություն ցույց տան գյուղական բջիջներէ աշխատանքին և այդ նպատակով տեղական աշխատանքի հաս-
մար պարբերաբար գյուղ ուղարկեն կուսակցական կազմա-
մակերպիչներէ խմբակներ, պրոպագանդիստներ ու ղե-
կավար աշխատողներ: Գյուղում մասսայական կազմա-
կերպչական աշխատանքի ծախումը ուղղակի կազմած
ե կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի
հետ: Առաջարկել կոմյերիտախումբային Անդրերկե-
սին, կենտկոմներին, մարզկոմներին և շրջկոմներին՝

ա) Լայն ծախումը կոմյերիտական նոր բջիջներէ
կազմակերպումը նոր հիմնված կոլտնտեսություններու՝
կուսակցական բջիջների կազմակերպման սկզբ-
բունքով:

բ) Բամբակագործական շրջաններում փետրվար
ամսվա ընթացքում կազմակերպել կոլտնտեսություն-
ների կոմյերիտականների համաքը, քննարկելով այդ
համաքներում առաջիկա գարնանացանի կամ պանիրայի
և կոլեկտիվացման հարցերը:

20. Նշելով, վոր բացարձակապես անբավարար
ուղադրություն ե նվիրվում կին կոլտնտեսականների
մեջ կատարվելիք աշխատանքին, վոր թերազնահատ-
վում ու սխալ ե վարձատրվում կանանց աշխատանքը
և կոլտնտեսությունների մեջ թույլ են ներդրվվում
չբավոր ու միջակ կանայք, Անդրերկոմն առաջարկում
ե կուսակցական և կոլտնտեսական կազմակերպու-
թյուններին՝ մասսայական լայն աշխատանք ծախ-
վել կանանց մեջ՝ թե կոլտնտեսություններում և թե
կոլտնտեսություններից դուրս, կազմակերպելով կու-
տնտեսուհիների հարվածային բրիգադներ ու կանանց
արտադրական խորհրդակցություններ, լայն առաջ բա-
շխելով կոլտնտեսուհիներին, վորպես կոլտնտեսության
վարչության նախադասներ, բրիգադներ ու աշխատանք-

քի կազմակերպիչներ, վորպես ղեկավարներ ու հարվա-
ծայիններ և այլն:

21. Կոլտնտեսական շինարարության զարգաց-
մանը զգալի խոչընդոտ ե հանդիսանում կուլտուրական
և քաղաքական աշխատանքի չափազանց թույլ կազմա-
կերպումը կոլտնտեսություններում: Այդ ասպարի-
զում մեր կարեւորագույն խնդիրն ե ընդհանուր գրա-
գիտության տարածումը կոլտնտեսուհիների մեջ: Անդր-
յերկումը բոլոր կուսկազմակերպություններին, վորպես
մարտական խնդիր, առաջադրում ե լիկվայաններում
գլխավոր ընդգրկել բոլոր անգրագետ կոլտնտեսական-
ներին, կիրառելով այդ ձեռնարկումը մասսայական
կուլտուրայի մեթոդներով, վճռաբար պայքարելով
լիկվայանների և ընդհանուր ուսուցման աջ ուղորտու-
նիստական թերազնահատման ու անտեսման դեմ:

Անդրերկոմն առաջարկում ե կուսկազմակերպու-
թյուններին, Կոլտնտեսությունին, գյուղատնտեսական
ըր կազմակերպություններին՝ ավելի մեծ աշխատանք
կատարել կոլտնտեսությունների ռադիոֆիկացիայի,
երանց մեջ շարժական կինոների ծախվածան ասպարի-
զում, նրանց թե՛ կոլտնտեսական շարժման և թե՛ մեր
շինարարության տնտեսական-քաղաքական խնդիրներին
վերաբերյալ եթանագին մասսայական գրականու-
թյուն մատակարարելու ասպարիզում, ինչպես և կազ-
մակերպել գյուղին կուսակցության տնտեսական-քա-
ղաքական հիմնական կամ պանիրայի վերաբերյալ թեր-
թիկներ ու պլակատներ ժամանակին հայթայթելու
գործը:

22. Հանրապետական, բերքային և ստորին գյու-
ղական մամուլը (պատի լրագրերը) պետք ե դառնու
հզոր լծակ մորթիլիզացիայի յենթարկելու չբավորների
և միջակների լայն մասսաներին կոլտնտեսական շինու-
րարության և գարնան գյուղատնտեսական կամ պանիր-
այի կիրառման հիմնական հարցերի շուրջը:

Մամուլը պետք ե սխառմատիկորեն լուսարանի

լավագույն կոլտնտեսութիւնների, մեքենա-տրակտորային կայանների և հարվածայինների և կին հարվածայինների լավագույն բրիգադներն աշխատանքի փորձը, ոգնելով հետ մնացողներին, կաղձակերելով շրջիկ խմբադրութիւններ, արտադրական ժրջականներ կոլտնտեսութիւնների միջև, հրավերելով գյուղ-թղթակիցների խորհրդակցութիւններ և այլն:

Կոլտնտեսական շարժումը կանգնած է նոր, հզար վերելքի առաջ: Կոլտնտեսական շարժման նոր վերելքի համար մղվող պայքարը միևնույն ժամանակ ամենատար պայքարն է կուլակուրքյան դեմ: Ներկայումս կուլակը կուլիկտիվացման դեմ իր մղած պայքարը փոխադրել է գոյուրքյան ունեցող կոլտնտեսութիւնների բայց բացման վրա, ձգտելով վառքի համել կոլտնտեսութիւններին կոլտնտեսական շարժման դեմ և այլն: Կուլիկտիվացման նոր վերելքը, յեթե նա մեռ վարպետ տարերս, յին անկազմակերպ շարժում, չի կարող սմուր լինել: Իրիւրայն մասսայական լայն քաղաքական և կազմակերպական բացատրական աշխատանք կատարելով կոլտնտեսական շինարարութեան կոնկրետ նվաճումները շուրջը, միայն վճռաբար, մինչեւ վերջը հաղթանակելով իբննահոսի տրամադրութիւնները և վնասակար պայքար մղելով «ձախ» շեղումների ռեցիդիվների դեմ հնարավոր է սկսված կոլտնտեսական վերելքը գարձնել անդրկոլկատյան գյուղի տասնյակ և հարյուր հազարավոր չքավոր ու միջակ մասսաների հզոր շարժում՝ առաջիկա գարնան գյուղատնտեսական կամ տանիայի պլանի կատարման և գերակատարման համար, Անդրկոլկատի գյուղատնտեսութեան արմատական վերակառուցման, Անդրկոլկատի գյուղի համատարած կուլիկտիվացման բոլոր պայմանների նախապատրաստման և այդ հիման վրա կուլակութեան, վարպետ դասակարգի վերացման համար:

<< Ազգային գրադարան



NL0204984

30.190